եւ ձեռքին բռնած երկու ծանր տախտակներ՝ խփում էր իրար ամեն անգամ, երբ բեմի վրա մի որեւէ անարդարութիւն էր կատարւում, եւ կամ երբ դերասաններից մէկը բարկանում էր:

Մենք խաղի կիսին հասանք, որի բովանդակութիւնը հետեւեալն էր: Կինը սպասում է իր բացակայ ամուսնուն, որ այնքան էլ երիտասարդ չէ արդէն: Այդ դրութիւնից ուզում է օգուտ քաղել մի պարոն. բայց դեռատի կինը մնում է անդրդւելի, մինչեւ որ ամուսինը վերադառնում է վերջապէս: Բայց, Աստուած իմ, ի՞նչ դրութիւն. չարագործները կողոպտել էին նրան ու կուրացրել: Նա հազիւ է գտնում իր տան ճանապարհը ու ընկնում է ներս ողբ ու լացով: Կինն էլ է սուգ բարձրացնում, ու այդ տեսարանը տեւում է ամբողջ մի ժամ: Այդ կողմից ճապոնացիք արդէն խիստ են իրական, նոյն իսկ չափազանց:

Մարդը խնդրում է, որ իրան տանեն տաճար, յուսալով, որ աստուածները կօգնեն ու կը բշժկւի: Սրբազան վայրերի տեղը բաւական գեղեցիկ էր. ներկայացնում էր մի լեառ ու վրան մի նեղ արահետ. լեռան գագաթին շինւած էր փոքրիկ տաճար: Բեմը բաւական ժամանակ մնում է դատարկ. մինչեւ որ վերջապէս պարտերով անցնում ու բարձրանում է բեմը երիտասարդ կինը, իր կոյր ամուսնուն առաջնորդելով: Կոյրը ճամփին յաճախ սայթաքում է, քիչ է մնում ընկնի արկղներում նստած հանդիսականների վրա, մինչդեռ բեմից անդադար ու կատաղի կերպով դղրդում են պատի տակ կանգնած ճապոնացու տախտակի հարւածները, տեսարանն անշուշտ աւելի սրտառուչ դարձնելու համար:

Վերջապէս հասնում են տաճարին, ուր ծերը սուզւում է իր աղօթքի մէջ. իսկ կինը, օգտւելով ազատ ժամանակից, արագ հեռանում է: Մարդը, աղօթքը աւարտելուց յետոյ,